Պապմ. Երուսաղէմ. Երես 278։ Զկնի 7 ամաց Եղանեն Լատինք 'ի վանաց Հրեշտակապետի։

Արդ՝ վանք Ս. Սիոնի է արտաքոյ պարսպի քաղաքին Երուսաղէմի, կարի մերձ նմին և Ս. Փրկչի վանքն Հայոց։ Յիսուս վարդապետն մեր տնդ եկեր զգառն Պասեքին յԸնթրեա. եւ տանդեաց աշակերտաց իւրոց զխորհուրդ փրկական Պատարագին. լուաց զոտս Աշակերտաց. յետ Յարութեան երեւեցաւ նոցա դրօքն փակելովք. եւ ետ շօշափել Թովմայի զվէրս կողին և զտեղիս բեւեռաց. յետ Համբարձման իւրոյ աստ ժողովեցան Առաքեալք և աշակերտք. աստ էջ ամենասուրբ Հոգին Աստուած եւ հանդեաւ 'ի դասս Առաքելոց, և զարդարեաց զնոսա եօթնարփեան շնորհօք. այլովքն հանդերձ։ Մօտ էր սմա եւ տուն ամենօրհնեալ կուսին Մարիամու մօր Տեառն, յորոյ վերայ կանգնեալ էր եկեղեցի, զոր կործանեցին այլազգիք։ Վանքն Սիոնի զերծաւ յաւերանաց Տիտոսի և Ադրիանոսի. վերջապէս աստ էր ժողովարան Առաքելոց եւ յաջորդաց նոցին մինչ 'ի շինութիւն եկեղեցեաց 'ի Սուրբ Տեղիս։ Յեղինակ շինութեան եկեղեցւոյն Սիոնի, ասի լինել նա ինքն թագուհին Հեղինէ մայր Կոստանդիանոսի մեծի։ Մովսէս Կաղանկատուացի յատորագրութեան եկեղեցեաց Ս. Երկրին, ստորագրէ նաեւ զեկեղեցին Սիոնի՝ այսպէս, «Ս. Սիոն եկեղեցին՝ միով ասպարիզաւ բացագոյն է 'ի յարութենէ՝ 100 կանգուն յերկայն և 70 'ի լայնն, 80 սեամիք կամարակապօք, և չէ վերնատնօք, այլ թարբ կապեալ է փայտեայ, և պսակ փշոյն կայ 'ի կախ դթարբէն, որ եդին Կենարարին 'ի գլուխ»։ Այս եկեղեցի զոր յառաջ բերէ պատմագիրն՝ կայր կանգուն մինչ ցեօթներորդ դար, և ապա կործանեալ յանյիշատակ ժամանակի. այժմ ոչ միայն հիմունքն՝ այլ և տեղին անդամ նշմարել անհնարին է. զի խառն 'ի խուռն տունք մահմետականաց կառուցեալ են անդ։ Յետ այսմ եկեղեցւոյ, յարէ՝ «Եւ յաջմէ եկեղեցւոյն վերնատունն խորհրդոյ, եւ փայտեայ գմբեթ. յորում նկարեալ է զԸնթեացն խորհուրդ Փրկչին. յորում է սեղան խորհրդոյ, և պատարագ մատչի 'ի վերնայարկին Սիոնի, և վերնատուն մի լինի»։ Նկարագրութիւն եկեղեցւոյս յայտ առնէ, այժմեան զեկեղեցին, որ